ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սաուդյան Արաբիայի Թագավորություն (Էր Ռիյադ) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**
   Նարեկ Մկրտչյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Սաուդյան Արաբիայի Թագավորություն (Էր Ռիյադ), 2023 թվականի դեկտեմբերի 12-ից 15-ը

4. **Հրավիրող կողմը.**
   Սաուդյան Արաբիայի Թագավորության մարդկային ռեսուրսների և սոցիալական զարգացման նախարար

5. **Գործուղման նպատակը.**
   Մասնակցություն Աշխատաշուկայի 1-ին գլոբալ համաժողովին

6. **Քննարկված թեմաները.**
7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

- Համաժողովին՝ նախարարական կլոր սեղանի շրջանակում, հանդես եմ եկել ելույթով, որտեղ կարևորել եմ աշխատաշուկայում անմրցունակ անձանց մասնագիտական ուսուցմանն ու զբաղվածության ապահովմանն ուղղված արդյունավետ ծրագրերի դերը՝ շեշտելով նաև կանանց տնտեսական հզորացմանն ուղղված միջոցառումների անհրաժեշտությունը: Այս համատեքստում անդրադարձել եմ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) միջև համագործակցությանը, որի շրջանակում հաջողությամբ իրականացվել է կանանց շրջանում ձեռներեցության զարգացմանն ու հմտությունների ուսուցանմանն ուղղված ծրագիրը: Ելույթումս ընդգծել եմ նաև միջազգային գործընկեր կազմակերպությունների հետ սերտ և արդյունավետ համագործակցության կարևորությունը՝ համատեղ նախաձեռնությունների իրականացման, ինչպես նաև ոլորտային խնդիրների կարգավորման տեսանկյունից: Միևնույն ժամանակ, այլ երկրների գործընկերներին ներկայացրել եմ ՀՀ աշխատանքի և զբաղվածության ոլորտում

իրականացվող բարեփոխումները, սահմանված առաջնահերթությունները և այդ ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

- Համաժողովի շրջանակում հանդիպել եմ Սաուդյան Արաբիայի Թագավորության թագաժառանգ, վարչապետ Մուհամեդ Բին Սալմանի հիմադրած «Մուհամեդ Բին Սալման (MiSK)» հիմնադրամի գործադիր տնօրեն Բադր Ալ Բադրի հետ, որի ընթացքում քննարկել ենք սոցիալական պաշտպանության ոլորտում փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր, այդ թվում՝ տեղեկատվական հաղորդակցության գործիքների արդյունավետ կիրառման, երիտասարդների շրջանում մասնագիտական կարողությունների զարգացման, ինչպես նաև ուսումնական կենտրոնների ստեղծման վերաբերյալ. դիտարկվել է նաև հայաստանյան հիմնադրամների և MiSk-ի հետ համագործակցության հնարավորությունը: Անդրադարձ է կատարվել նաև սոցիալական պաշտպանության համակարգում տեխնոլոգիական նորարարությունների իրականացման կարևորությանը:

  Ալ Բադրը ներկայացրեց հիմնադրամի կողմից իրականացվող աշխատանքները և նշեց, որ իրենց գործունեության առանցքում կրթության և ձեռներեցության ոլորտների զարգացմանն ուղղված ծրագրերն են: Նա պատրաստակամություն հայտնեց փորձի փոխանակում և նախաձեռնություններ իրականացնել այս ուղղություններով ևս:

- Հանդիպում եմ ունեցել Սաուդյան Արաբիայի Թագավորության Մարդկային ռեսուրսների և սոցիալական զարգացման նախարար Ահմադ բեն Սուլեյման Ալ-Ռաջիի հետ, որի ընթացքում անդրադարձ ենք կատարել աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտում համագործակցության հեռանկարներին, մասնավորապես՝ սոցիալական ծառայությունների մատուցման գործընթացում արհեստական բանականության կիրառման, կանանց հզորացման, աշխատաշուկայի զարգացման, գործազրկության կրճատման և մի շարք այլ ուղղություններին:
  Երկուստեք հետաքրքրություն ներկայացնող ոլորտային հարցերի քննարկման համատեքստում՝ Ահմադ բեն Սուլեյման Ալ-Ռաջին պատրաստակամություն հայտնեց խորացնել Հայաստանի Հանրապետության հետ ոլորտային համագործակցությունը:

  Քննարկված հարցերին գործնական ընթացք հաղորդելու նպատակով՝ հանդիպումը շարունակել եմ Սաուդյան Արաբիայի Թագավորության Մարդկային ռեսուրսների և սոցիալական զարգացման նախարարի տեղակալ Աբդուլահ Նասսեր Աբութնահինի հետ: Հանդիպման արդյունքում ստեղծվեց աշխատանքային խումբ՝ համագործակցության հետագա քայլերը կանոնակարգելու և դրանց ընթացք տալու նպատակով: Ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ աշխատանքային խումբը կիրականացնի նաև անհրաժեշտ աշխատանքներ

հուշագրի կնքման նպատակով, որտեղ կներառվեն համատեղ ծրագրերի իրականացման և համագործակցության զարգացման ուղղությունները:

- Հանդիպել եմ Սաուդյան Արաբիայի Թագավորության Աշխատանքի ազգային հետազոտական կենտրոնի գլխավոր գործադիր տնօրեն Ուսամա Ալգեմիլիի հետ: Հանդիպման ընթացքում երկուստեք ընդգծել ենք սոցիալական պաշտպանության ոլորտում համագործակցության մեծ ներուժի կարևորությունը, մասնավորապես՝ համատեղ սոցիալական հետազոտությունների իրականացման և աշխատաշուկայի զարգացմանն ուղղված ծրագրերի շրջանակում:

  Անդրադառնալով սոցիալական պաշտպանության ոլորտում սահմանված առաջնահերթություններին և այս ուղղությամբ իրականացվող աշխատանքներին՝ ներկայացրել եմ կանանց տնտեսական հզորացմանն ու աշխատաշուկայում վերջիններիս մրցունակության բարձրացմանն ուղղված ծրագրերը: Ներկայացրել եմ նաև նախարարության ենթակայությամբ գործող՝ «Նորք» տեխնոլոգիաների կենտրոնի և «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող աշխատանքները՝ մանրամասնելով սոցիալական ծառայությունների թվայնացման և արհեստական բանականության կիրառման գործընթացները:

  Ուսամա Ալգեմիլին փորձի փոխանակման և համատեղ ծրագրերի իրականացման պատրաստակամություն հայտնեց և հանդիպման ավարտին պայմանավորվածություն ձեռք բերվեց ստեղծել աշխատանքային խումբ՝ համագործակցությանն առնչվող մանրամասները քննարկելու նպատակով:

- Հանդիպում եմ ունեցել Հունաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական ապահովության նախարար Ադոնիս Գեոգիադիսի հետ:
  Ընդգծելով երկու երկրների բարիդրացիական հարաբերությունների կարևորությունը՝ քննարկել ենք աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտում համագործակցության ուղղություններին առնչվող մի շարք հարցեր. դիտարկվել է նաև համատեղ հուշագրի ստորագրման հնարավորությունը:
  Ադոնիս Գեոգիադիսը նշեց, որ Հունաստանում աշխատուժի կարիք կա և պատրաստակամ են Հայաստանից ևս ներգրավել համապատասխան մասնագետների:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Համաժողովի ընթացքում փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

- Առաջարկում եմ քայլեր ձեռնարկել Սաուդյան Արաբիայի Թագավորության Մարդկային ռեսուրսների և սոցիալական զարգացման նախարարության հետ աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտում համագործակցության մասին փոխըմբռնման հուշագրի մշակման և ստորագրման ուղղությամբ;
- Սաուդյան Արաբիայի Թագավորության Մարդկային ռեսուրսների և սոցիալական զարգացման նախարարության հետ քննարկվել է համատեղ նախաձեռնել «Աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտում Արհեստական բանականության գլոբալ կոալիցիա» խորհրդատվական համագործակցային հարթակ: Առաջարկում եմ քայլեր ձեռնարել հարթակը կյանքի կոչելու ուղղությամբ:
- Սաուդական կողմը ողջունել է գաղափարը, որն առաջարկվել է քննարկել նաև սաուդյան «Տվյալների և արհեստական բանականության պետական գերատեսչության» (Saudi Data & AI Authority (SDAIA) հետ: Արդյունքում հանդիպել եմ այդ գերատեսչության նախագահ, նախարար Աբդուլլահ Շարաֆ Ալղամդիի հետ, ով առաջարկել է դիտարկել SDAIA-ն՝ որպես հնարավոր նախագծերի իրականացման հարթակ: Գաղափարն իրականացնելու համար պայմանավորվածություն է ձեռք բերվել քայլեր ձեռնարկել հուշագրի մշակման և ստորագրման ուղղությամբ:

X

ՆԱՐԵԿ ՄԿՐՏՉՅԱՆ

Signed by: MKRTCHYAN NAREK 3014890804

Ստորագրությունը, ամսաթիվը:

Հավելված N 2
ՀՀ վարչապետի
N 326-Ն որոշման

«Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն
որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը *ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն*

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը *ՀՀ վարչապետի 11.12.2023թ. N 1252-Ա որոշում*

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

ՀՀ ԱՍՀՆ նախարար՝ Նարեկ Մկրտչյան

4. Գործուղման վայրը- *Սաուդյան Արաբիայի Թագավորություն (Էր Ռիյադ)*

5. Գործուղման ժամկետները *12.12.2023թ.-15.12.2023թ.*

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը՝

(*թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն*)

ճանապարհածախս, գիշերավարձ

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը

(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

- ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

- բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		*Անուն, ազգանուն*	**Ընդամենը** (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	-	-
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	-	-
Գիշերա-վարձի հաշվարկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	-	-
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	-	-
	Օրերի քանակը	-	-
	Ընդամենը (դրամ)	-	-
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	-	-
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	-	-
	Օրերի քանակը	-	-
	Ընդամենը (դրամ)		
Այլ ծախսեր	Հակահամաճարակային Նմուշառումների վճար	-	-
	Մուտքի արտոնագրի վճար	-	-
	Այլ ծախսեր (նկարագրել)	-	-
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)			

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը, ամսաթիվը

X

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԳԼԽԱՎՈՐ ՖԻՆԱՆՍԻՍՏ Signed by: MURADYAN SAMVEL 1104630109 **Ս. ՄՈՒՐԱԴՅԱՆ**